Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 821 - Ա
որոշման

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի միակողմանի ծնողազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության մարզեր և Ջավախք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	81,200,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի 750 միակողմանի ծնողազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների, միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա: 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝ 1) նախատեսվում է տարին երկու անգամ դրամական օգնության տրամադրում՝ 75,000,000 դրամի չափով. 2) Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում. 3) կազմակերպական ծախսեր՝ 6,200,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կապի և հաղորդակցության ծառայություններ 1,000,000 դրամ 2) ավտոմեքենաների վառելիք 1,200,000 դրամ 3) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ 1,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 6,200,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 7.6 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝ 1) ծրագրի ղեկավարի աշխատավարձ 3,000,000 դրամ 2) կապի և հաղորդակցության ծառայություններ 1,000,000 դրամ 3) ավտոմեքենայի վառելիք 1,200,000 դրամ 4) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ 1,000,000 դրամ

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝ 1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 2) Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների, 3) Տեղական ինքնակառավարման մարմինների, 4) Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունյաց, Արագածոտնի, Արցախի և Վիրահայոց թեմերի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ